ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ.

Սինօդը՝ լսելով Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի Կոնսիստորիայի այս տարուայ ապրիլի 13-ի Թ. 845 յայտարարութիւնը, որով յայտնում է, թէ Ն. Նախիջևանի քաղաքի բնակիչ Յովակիմ Ճշեդրինը ներկայացրել է 2000 ռ. կանխիկ դրամ և 4000 ռուբլու պարտամուրհակներ ու յայտնել, որ այդ 6000 ռուբլին նուիրում է Սիմֆերոպօլի Հայոց եկեղեցուն, որի $^0/_0{}^0/_0$ պիտի Գէորգեան Ճեմարանում մի չքաւոր հայ աշակերտ, Խրիմի բնակիչ, առաւելապէս Սիմֆերոպօլից, կրթութիւն ստանայ՝ որոշեց. Նախ՝ պատուիրել Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիայի Կոնսիստորիային կարգադրել, որ ա) նուիրատու Ճշեդրինից ստացած 2000 ռ. փոխանակ առանց $^0/_0$-ի պահելու Սիմֆերոպօլի եկեղեցու դրամարկղում՝ յանձնել յարմար դրամական հաստատութեան ի շահեցողութիւն իբրև անձեռնմխելի դրամագլուխ և դրամատան տոմսը մուտք գրել եկեղեցու մայր մատեանում. բ) հետևել, որ եկեղեցու երեսփոխանը պարտամուրհակների ժամանակներին ստանայ առաջիկայ տարիների 4000 ռ. վճարները և անմիջապէս յանձնի դրամատուն՝ միացնելու մայր գումարին և շահեցնելու բարդ $^0/_0{}^0/_0$-ով և գ) երբ հնարաւորութիւն կստեղծուի դրամագլխի $^0/_0{}^0/_0$-ով պահել սան Մայր Աթոռի Ճեմարանում՝ կարգադրել ընտրել թոշակաւոր, նուիրատուի դրած պայմաններով: Եւ երկրորդ՝ Ճշեդրինի նուիրատուութեան մասին տեղեկութիւն տալ Մ. Աթոռի Ճեմարանի վարչութեանը, ուղարկելով նուիրատուի 1914 Թ. փետրուարի 24-ի և 27-ի գրութիւնների և Սինօդիս այս որոշման պատճէնը: 1 մայիսի, Թ. 169:

Սինօդը՝ լսելով Ղարաբաղի Կոնսիստորիայի այս տարուայ ապրիլի 20-ի № 1029 յայտարարութիւնը – իւր նախկին դիւանական ծառայող Եփրեմ Մարգանեանին, հիւանդութեան պատճառով, նպաստ տալու մասին՝ որոշեց.

թոյլ տալ Ղարաբաղի Կոնսիստորիային տալ Կոնսիստորիայի նախկին ծառայող Եփրեմ Մարգանեանին ինն սուն (90 ռ.) ռուբլի միանուագ նպաստ վիճակային արդիւնքից։ 1 մայիսի, թ. 170։

Մինոզը՝ լսելով Երևանի Կոնսիստորիայի 1914 թ. հոկտ. 8-ի № 6446 յայտարարութիւնը և նորին Սրբութեան տարեոյս մարտի 7-ի № 368 մակագիր պատուէրը Սարգիս Տէր Նիկողայոսեանին քահանայ ձեռնադրելու մասին՝ որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Սարգիս Տէր Նիկողայոսեանին և յանձնարարել Երևանի Փոխ թեմական ձեռնադրել Տէր Նիկողայոսեանին քահանայ Ցղնա գիւղի ծխականների համար։ Ընծայացուի վկայականները վերադարձնել Կոնսիստորիայի ձեռքով։ 1 մայիսի, թ. 171։

Մինոզը՝ լսելով Վեհափառ Կաթուղիկոսի այս տարուայ ապրիլ 8-ի № 618 մակագրութիւնը Նոր Ծխական Կանոնադրութեան մասին՝ որոշեց. Համաձայն Վեհափառ Կաթուղիկոսի մակագրութեան նախ՝ առաջնորդուել Նոր Ծխական Կանոնադրութեամբ, երկրորդ՝ շրջաբերական հրաման տալ բոլոր թեմական առաջնորդների անունով, որ մինչև 1916 թ. յունուարի 1-ը իրենց հայեցողութեամբ կազմեն Ցանձնաժողովներ քննելու քահանայացուներին հին ծրագրով, տալով նրանց պատշաճ վկայականներ, իսկ յունուարի 1-ից արուելու է Վեհափառ Կաթուղիկոսի կողմից նոր տնօրէնութիւն քննելու ընծայացուներին Նոր Ծխական Կանոնադրութեան կցած ծրագրով։ 4 մայիսի, թ. 175։

Մինոզը՝ լսելով Վրաստանի Կոնսիստորիայի այս տարուայ ապրիլ 18-ի № 1709 յայտարարութիւնը, որով մատուցել է Մարիամ Ամարեանի յօգուտ ս. Երուսաղէմի կտակած 40 ռուբլին՝ որոշեց. պատուիրել Մինոզիս Հաշուարարական Մասին մուտք գրել իբրև աւանդ Մարիամ Ամարեանի յօգուտ ս. Երուսաղէմի հայոց վանքի կտակած քառասուն ռուբլին, որ և, հաղորդակցութեան պայմանները ներելուն պէս, ուղարկել ըստ պատկանելոյն։ 11 մայիսի, թ. 181։

Ս. Էջմիածնի Սինոդի 4 մայիսի 1915 թ. օրագրական որոշումն.

Աստրախանի Հայոց Վիճ. Կոնսիստորիան այս տարուայ փետրուար 10-ի № 253 յայտարարութեամբ դիմել էր և խնդրել Սինոդից հրահանգ հետևեալ հարցերի մասին. 1) երբ մի կին օրինական կարգով բաժանուած է իր ամուսնուց՝ այնուհետև ինչ ազգանունով պէտք է ճանաչել նրան, կամ եթէ բաժանուած է երկրորդ ամուսնուց, արդեօք իւր առաջին ամուսնու ազգանունով՝ թէ բաժանուած մարդու։

Սինոդը՝ քննութեան առնելով այդ հարցերը, իւր 4-ն մայիսի օրագրով որոշել է հետևեալը՝

«Հրամայեցին՝ յայտնել Աստրախանի Կոնսիստորիային խնդրած հարցերի վերաբերեալ հետևեալ բացատրութիւնը, համաձայն X հատ. I մ. 101 յոդ. և Կառավարիչ Սենատի 1913/57, 1903/9773 բացատրութիւնների, երբ մի կին օրինական կարգով բաժանւում է իւր ամուսնուց, այդ կինը կարող է իւր բաժանուած ամուսնու ազգանունով գրուել, և երկրորդ՝ եթէ ամուսնալուծութիւն ստացած կինը պսակւում է երկրորդ անգամ մի ուրիշի հետ, հարկաւ կորցնում է առաջին ամուսնութիւնից ունեցած ազգանունը և կրում է երկրորդ ամուսնու ազգանունը, հետևապէս երկրորդ ամուսնուց երբ օրինաւոր կերպով բաժանւում է, այսինքն պսակը լուծւում է, կինը պահպանում է իրաւունք կրելու իւր երկրորդ ամուսնու ազգանունը և ոչ թէ առաջին։ Վ.ճռիս մասին շրջաբերականով յայտնել բոլոր կոնսիստորիաներին ի հրահանգութիւն և տպագրել «Արարատ» ամսագրում»։